ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2020թ. թիվ 33-Ա

ԳԱՅԱՆԵ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից 2019թ. օգոստոսի 14-ից սեպտեմբերի 6-ը ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում իրականացված վերահսկողության արդյունքների մասին ՀՀ կրթության տեսչական մարմնի ներկայացրած 17.09.2019թ. տեղեկանքը և հաշվի առնելով Գ.Ռաֆայելյանի 16.01.2020թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների համար «ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Գայանե Ռաֆայելյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 16
ք.Վանաձոր